



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ի ՎԵՐՈՒՄՏ ԱԿՆԱՐԿ

ՈՒՍՈՒՑՄԱՆ

ԵՒ

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ

ԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Գրեց՝ ~~Արմ~~ Պ. ԳԵՈՐԳԵԱՆ



371.3  
Գ-47

1958  
NARIN MATBAASI  
İSTANBUL

Հիշատակ  
Հիշատակ. 18/IV/58  
(Կարգա)

371.3  
9-47



27224-60

18 MAR 2013

1 MAR 2010

Ի ԽՆԴԻՐ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՉՈՑ...

Ի խնդիր մեր Ուսուցչաց մանկավարժական նոր նոր տը-  
կալներու ծանօթացման, «Էրպարդ եւ իր Գործը» և «Իրական  
խնդիրներ» է վերջ, ահա նոր զոհողութեամբ մը կը հրատարա-  
կենք Մանկավարժութեան յայտնի դասախօս Տիար Պ. Գէորգեանի  
«Ի վերուս ակնարկ ուսուցման եւ կարգապահութեան եղափոխու-  
թեան վրայ» համառօտ ուսումնասիրութիւնը:

Սոյն գրքոյկին ֆրանսերէն ընագրին՝ կարգ մը մեզ համար  
անհրաժեշտ յաւելումներով՝ հայերէնը պատրաստած է նոյն-  
ինքն հեղինակը՝ Տիար Պ. Գէորգեան ընդառաջելով մեր խըն-  
դրանքին, որուն համար պարտք կը համարենք, անգամ մը ևս,  
մեր սրտագին շնորհակալութիւնները յայտնել:

Մենք պիտի խուսափինք մեր կողմէ խօսելէ հեղինակին  
և իր գործին մասին: Մեր մէջ արմատացած սովորութիւն մըն  
է որ, երբ գնահատումը օտարէն կուգայ — մանաւանդ հեղի-  
նակաւ որ օտարէ մը — քաղաքացիի իրաւունք կը ստանայ մեր  
կողմէն ևս կարեւորութեան արժանանալու: Հոս պիտի ներ-  
կայցենք Լոնտոնէն իմաստասիրութեան Professeur N. Isaacs ի  
կարծիքը. «Տիար Գէորգեանի սոյն գրքոյկին ընթերցումը շատ  
գրաւիչ է և թէ Պղատոնէն սկսեալ շարադրած մէջբերումնե-  
րը, արտակարգօրէն կոչուած են հարցը լուսաւորելու: Կ'աւել-  
ցնէ թէ կ'արժէ ջերմապէս շնորհաւորել հեղինակը իր այս  
փայլուն հակիրճ ուսումնասիրութեան համար և թէ շատ երջա-  
նիկ ու բարեբախտ կը զգայ ինքզինքը անկէ օրինակի մը  
տիրացած ըլլալուն համար:»

Կարելի՞ է միթէ բառ մը աւելցնել: Կը մողթենք միայն  
որ մեր յարգելի Դաստիարակները գիտնան գնահատել մեր  
կողմէ սիրայօժար կատարուած զոհողութիւնը և օգտուին,  
որպէս զի մենք ալ, մեր կարգին, վարձատրուած զղանք ինք-  
զինքնիս:

Մարտ 1958

Վ. Հինգիեան

0105 9AM 1

47.995



Զինքը իր ընթերցողներուն ծանօթացնելու մտօք, քանիցս խնդրած էի Պր. Պ. Գէորգեանէն իր լուսանկարը տրամադրել: Միշտ ալ անպատասխանի թողած ըլլալով խնդրանքս, այս անգամ նախապէս ինձ նըւիրած մէկ լուսանկարը ներկայացնելէ տարբեր ճար մը չգտայ:

Վ. Հ.

## Ի ՎԵՐՈՒՍՏ ԱԿՆԱՐԿ Ռումցման եւ կարգապահութեան եղափոխութեան վրայ (\*)

Իրեւցածին նայելով՝ իրաց ընական կարգաւորութեան համաձայն է որ որեւէ եղափոխութեան փուլերէն մտէն մէկուն մէջ թէ՛ նախապարապետ նշաններ դտնուին հետագայ փուլերուն եւ թէ կարգ մը հետքեր չարունակեն մնայ նախորդ փուլերէն. փուլերը կզմինտրաշարի (imbrication) կամ իրարու վրայ ելլող ալիքներու ձև կ'առնեն, իրարու մէջ կը մտնեն աւելի՛ քան թէ իրարմէ անջատ անջատ շարքով մը կը յաջորդեն իրարու: Այ՛դ կը նշանակէ արդէն եղափոխութիւն բառը:

Եւ սակայն, եթէ քիչ մը վերէն դիտենք իրողութեանց ընթացքը՝ չի կրնար մեր ուշադրութեան վրիպիլ, եւ հետեւաբար անկարելի կ'ըլլայ ժխտել, թէ իրարմէ տարբեր նկարագիր ունեցող փուլեր կը յաջորդեն իրարու եւ կը զանազանուին իրարմէ: Ատով մտէն եղափոխութիւն ստեղծիչ է:

Ուսուցման եւ կարգապահութեան եղափոխութիւնը չէր կրնար բացառութիւն կազմել. դուրս իյնալ այս օրէնքէն:

Արդարեւ մէկ կողմէ, խիստ հին հեղինակներու գործերուն մէջ կը գտնենք այնպիսի՝ գաղափարներ եւ սկզբունքներ որոնք հազիւ կէս դարէ իվեր յարգ ու պատիւ կը վայելեն: Պղատոն, օրինակի համար, կը հաւատտէր ասկէ աւելի քան երկու հազար տարի առաջ թէ՛

«Ակզբնաւորութիւնները եական են դեռասի եւ մասդաւ բնութեան մը մեջ՝ որուն բոլոր մասերը իրենց կրած դրոճը կը պահեն», թէ՛ «Ազաւ միսք մը ոչինչ ստրվելու է գերիի պես... Հոգիին մեջ բռնի մտնում դաս մը չի կրնար մնալ: Ուսի բռնութիւն մի՛

(\*) La Nouvelle Revue Pédagogique (Tournai, Belgique) 1957 Մեղտեմբերի թիւին մէջ լոյս տեսած է նախ այս գրութիւնը, յետոյ ալ տետրակի ձևով:

Յիշատակուած մեթոտները եւ գրութիւնները քիչ մը մանրամասնել անհրաժեշտ թուեցաւ ինձի ընթերցողներէս գտնէ ոմանց համար: Այդ նպատակաւ Յաւելուած ով մը պիտի ամբողջանայ այս ուսուսմասիրութիւնը: Մ. Հ.

բանեցնեմք սոց վրայ, այլ այնպես մը քրեք որ խաղալով ուսանին, որպէսզի կարենանք հեղեկանալ անոնցմէ իւրաքանչիւրին ընդունակութեանց:»

Այս առգերուն մէջ գիտական մանկավարժութիւնը կը խըտանայ ամբողջ.— մանկութեան կարեւորութիւնն և ազատական դաստիարակութիւնն: Այդ գաղափարները զարգանալ, լուսաբանուիլ և ընդլայնուելու կը կարօտէին անչուշտ: Այդպէս ալ եզրած է, դանդաղօրէն բայց յարատեւօրէն, պատմութեան ամբողջ ընթացքին, ար Ֆէլդըրի, Ռապըլլէի, Մոնդէլէի, Քոմէնիուսի, Լոքի և ուրիշներու կողմէ: Եւ թրօձը հատրփի չէ՞նք պարտիր միթէ առաջին փորձը, ժ.Պ. դարուն արդէն, աշակերտներու ինքնավարութեան դրութեան—Self-government:

Այսպէս է որ նախակարգապետներու գաղափարներուն յաջորդութիւնը կողմինարաջարի ձեւով, ինչպէս կոչեցինք, և հետուէն, երբեմն շատ հետուէն գալով, արդի ժամանակներուն յանդեցաւ Ռուսօ — ֆեթալոցիի և նոր դաստիարակութիւնը կառուցանողներուն, մինչ՝ անդին ալ՝ շատ մը հին գաղափարներ և դաստիարակչական թէքնիքներ իրենց գոյութիւնը կը պահեն տակաւին: Անոնցմէ ոմանք խիստ հինցած են նոյնիսկ, զորս սովորաժողութիւն կը կոչենք:

Միւս կողմէ, կարելի չէ, գէթ տեսականին մէջ, փութերու վերոյիջեալ ձեւով յաջորդութեան հետ միաժամանակ, խիստ որոշ յաջորդութիւն մը չհաստատել:

Առնենք նախ ուսուցման պարագան:

Ինծի այնպէս կը թուի որ այդ յաջորդականութիւնը կարելի է հետեւեալ կերպով կարգաւորել.

Ա. Աւանդական ուսուցում.— ուսուցիչը կ'ուսուցանէ աշակերտին՝ ուսմանց ծրագրի մը համաձայն, անթեքելի և պարտադիր: Միաժամանակ (simultané) ուսուցման եղանակն է — ուրիշին կողմէ ուսուցում և զանգուածային (դասարանի մը), որուն նպատակն է գիտելիքներ ջամբել, և կը հիմնուի աշակերտներուն իւրացումի կարողութեանը վրայ:

Բ. Մանկալի՛ կերպով անհասկանացած (ուսուցում.— Ըսել կ'ուզեմ թէ նախօրօք կազմուած ուսմանց ծրագրի մը կը պարտադրուի դարձեալ, բայց իւրաքանչիւր աշակերտ ի՞նք կը գործադրէ զայն, յառաջգիմելու իր իւրաքանչիւր կշռոյթին համաձայն: Ուսուցիչը դաս չ'ըներ այլեւս: Կ'օգնէ՛ աշակերտին,

անոր ինքնազարգացման աշխատութեան մէջ, երբ պէտք ունենայ իրեն: Չ'ուսուցաներ (enseigner) աշակերտին, այլ ըստ Ռ. Գուզիէի յաջող բանաձեւին, «տեղեկութիւններ կը հայթայթէ» (renseigner) երբ աշակերտը խոչընդոտի հանդիպի և աշխատութիւնը չկարենայ շարունակել: Ուսուցման եղափոխութեան այս փուլին ամէնէն ծանօթ ներկայացուցիչներն են Տալլերի Դուրիւնը, Ուիննեքֆայի Դուրիւնը, Մանքստաիի Մեքսը: (Տեսնել Յաւելուածը, Ա. մաս):

Գ. Անհասկանացած ուսուցում.— Սովորական իմաստով ուսմանց ծրագրի գոյութիւն չունի այլեւս: Նախօրօք յղացուած չէ, այլ աշակերտները աստիճանաբար կը կազմեն զայն ըստ իրենց ներկայ պահու հասարակաց չահագրգուութեանց, և ընդհանրապէս հաւաքական աշխատանքի միջոցաւ կը գործադրեն:

Ուրեմն խնդիրը ուսուցչին կողմէ մարտելի դարձուած և ներկայացուած «պատրաստ» ծանօթութիւններ ձեռք բերել տալու վրայ չէ աշակերտներուն, այլ թոյլ տալու որ, չնորհիւ անհատականը և հաւաքականը իրար խառնուած աշխատանքի, անսնցմէ իւրաքանչիւրը ինք ա'նձնապէս ծանօթութիւններ ձեռք բերէ. ծանօթութիւններ որոնք, ինչպէս կը պահանջէ Գլափառէտ, «պատասխան» ներ ըլլան, գիւտեր, և ատուի ի յայտ բերէ իր ստեղծելու ընդունակութիւնները, զարգացնէ՛ զանոնք — ինչ որ կը նշանակէ ինքզինէր զարգացնել — իրեն յատուկ կշռոյթին համաձայն: Հետեւաբար ուսուցչին էական դերը ուրիշ բանի մէջ չի կայանար այլեւս, բայց եթէ աշակերտին հայթայթելու այդպիսի գործունէութեան մը համար անհրաժեշտ միջավայրը և միջոցները: Ատո՛ր է որ կը ձգտին Շահագրգոութեան կեդրոններու (centres d'intérêt) Մեքսը, Մրագրերու Մեքսը (Project method), և բոլոր այն մեթոտները որոնք գործու կամ պաեսոնային ըլլալ կ'ուզեն: (Տեսնել Յաւելուածը, Բ. մաս): Չափով վրայ Դպրոցը ցնորք մը չէր անտարակոյս: Արդարեւ ի՞նչ է ան, ի վերջոյ, եթէ ո՛չ սա կամ նա ձեւին տակ անհատականացում (\*):

Չուզահետաբար ուսուցման այժմեայ եղափոխութեան կարգապահութեան ալ եղափոխութիւն մը կը տեսնենք: Խիստ բնական երեւոյթ՝ արուած ըլլալով որ ուսուցման եղափոխութեան փու-

(\*) ED. CLAPARÈDE, L'Ecole sur Mesure, 2me édition 1953, Delachaux et Niestlé, Neuchâtel et Paris, frs, suisses 4.15.

լերէն իւրաքանչիւրը իրեն յարմար կարգապահական դրութիւն մը կը պահանջէ — աւելի ճիշդ՝ իբր հետեւանք կ'ուենենայ — և անով ալ կը յատկանշուի: Այսպէս.

Ա. Աւանդական ուսուցման, որ իշխողական դրոշմ կը կրէ, նոյն ոգիէն ներշնչուած կարգապահութիւն մը կը համապատասխանէ: Աշակերտը՝ ինչպէս որ պարտաւոր է իրեն պարտադրուածը սորվիլ՝ նոյնպէս ալ պարտաւոր է հնազանդիլ դպրոցական իշխանութեան կողմէ հաստատուած կանոններու: Գրտելի է որ այս կարգապահական իշխողական դրութիւնը, որուն նպատակն է, ամէն բանէ առաջ, կարգ-կանոնը պահել դպրոցին մէջ, բարեփոխուած է ժամանակի ընթացքին. կամայական էր ատենօք, բռնադատիչ և երբեմն անգութ, հետագային վիճակէ հասկցող դարձած է և մեղմացած՝ շնորհիւ Հերպարդականութեան որ կ'ուզէ նկատի առնել սղուն հոգեբանութիւնը և կատարել լազորձեալ տիպարն է՝ կերպով մը՝ աւանդական ուսուցման: Ուրիշի՝ կողմէ զանգուածային ուսուցումը իրեն իբր օժանդակ ունի ուրիշի կողմէ զանգուածային դաստիարակութիւնը, և կ'ամրապնդուի անով:

Բ. Այն ուսուցման պարագային զոր «մանակի՛ կերպով անհատականացած» կոչեցի, աշխատութեան ազատութիւն կը տրուի աշակերտին և, իրերո՛ւն բերմամբ, վարքի ալ նոյնիսկ՝ մինչև աստիճան մը: Տակաւին ենթարկուած ըլլալով հանդերձ իշխանութեան մը կողմէ նախօրօք հաստատուած դպրոցական կանոններու՝ աշակերտը անձնապէս պատասխանատուութիւնը ունի իր ձեռք բերելիք ուսման, տրուած ըլլալով որ պատասխանատուութիւնը ազատութիւն կ'ենթադրէ, ինչպէս որ ազատութիւնն ալ պատասխանատուութիւն կը բերէ իրեն հետ:

Գ. Բոլորովին անհատականացած ուսուցման մէջ, կարգապահութիւնը շիտակ շիտակ աշակերտներուն ազատութեան և պատասխանատուութեան վրայ կը հիմնուի: Ուսուցման անհատականացումը այդպիսի՝ կարգապահութիւն մը կը պահանջէ, տրուած ըլլալով որ իշխողական դրութիւնը անհատներէ է անհատական նախաձեռնութեան հետ: Այս պարագային պատասխանատուութիւնը լոկ անհատական չ'ըլլար, այլ հաւաքական ալ (խմբական): Ինքնազարգացումին թեւ թիկունք կ'ըլլայ ինքնադաստիարակութիւնը, որուն հետեւանքով անհրաժեշտ կը դառնայ աեակերսներու ինքնավարութեան դրութիւնը (self-govern-

ment), խնդիր չի՛ թէ բացայայտօրէն կազմակերպուած ըլլայ ան, կամ թէ՛ իրերու բերմամբ՝ հասարակաց կանոններ հաստատուին ինքնաբերաբար խումբին բոլոր անդամներուն համար՝ էականը այն է որ իւրաքանչիւր աշակերտ համբաշխաբար՝ պատասխանատու զգայ ինքզինքը ամբողջ խումբին աշխատութեան արդիւնքներուն և վարքին: Պատասխանատուութիւն, ուրեմն, ո՛չ թէ անհատի՛ այլ ընկերային մարդու, լրացեալ՝ մարդու, տրուած ըլլալով որ մարդկային էակը իր հաւասարներուն հետ գործակցելով՝ միայն կրնայ իր լրումը գրուիլ հանել. տրուած ըլլալով որ ընկերային կեանքի մէջ միայն անձը կրնայ ինքզինքը գտնել, գիտակցիլ իր ինքնութիւնը և ստեղծող կարողութեանց, իրականալ և տարածուիլ:



Մարդ պիտի կրնար յիշատակել փորձուիլ, իբր վերջին փուլ խնդրոյ առարկայ եղափոխութեան, այն ապերասան մանկավարժութիւնը որ Համպուրկի ընկեր-ուսուցիչները կիրարկութեան դէն վորձեցին (1919-1933): Բայց արդիւնքը ծանօթ է. կատարեալ ձախողութիւն և վերադարձ բանականութեան, սղուն բնութեան ճշմարիտ օրէնքներուն յարգանքի՝ Նախատեսելի՛ էր, քանի որ ապերասան մանկավարժութիւնը կը կայանայ պարզապէս բարձու մին մէջ նոյնինքն մանկավարժութեան — այսինքն դաստիարակչական ամէն նպատակի և ամէն մեթոտի —, հետուամն է՝ բաց է ի բաց՝ իմաստուն Պէյքընի ազդարարութեան. «Բնութեան օրէնքներուն հնազանդելով լոկ կարելի է հրամայել անոր»:

«Խիտ խորիմաստ խօսք — մէջբերումն Բլախուստէտէն է — խի՛տ խորիմաստ խօսք որ սակետառ արձանագրուած ըլլալու էր մեր հանրային և անհատական բոլոր կրթական հաստատութեանց ձակատը»:

Այլ խօսքով, դաստիարակութիւնը պարտի ազատական (libéral) ըլլալ, ինչ որ, հազիւ պէտք կայ պնդելու, բոլորովին տարբեր բան է ապերասան՝ (libertaire) դաստիարակութեանէն: Ազատական դաստիարակութիւն կը նշանակէ որեւէ խոչընդոտի չ'դրուիլ պարզապէս՝ մարդկային դեռատի էակին ներքին կեանքի արտայայտութեան առջեւ, հետեւաբար և անոր բնական զարգացման: Զարգացում՝ որուն բերուած օժանդակու-

Թիւնը ուսուցչին կողմէ նման պիտի ըլլար — ըստ Փետթարոց-  
ցիի պատկերին — խոհական պարտիզպանին խնամքներուն:  
Հապա՞ Յրէօպէլ. ինչ լաւ դիտած և ինչ լաւ ըսած է.

«Տղուն մէջ գործող ներքին ոյժին վրայ քիչ վստահութիւն  
ուենեալնուս պատճառաւ է որ այդ ոյժը այնքան քիչ արդիւնք  
կուտայ՞ անիկա կը տկարանայ չգործածուելով, կամ ոչինչի  
կը վերածուի...: Տղուն այդ ներքին և ա՛յնքան բեղմնաւոր  
կեանքը բանի տեղ չբնեւնուս հետեւանքով է որ անոր (աղուն)  
մէջ յառաջ կը բերենք մեր կողմէ ենթադրուած պարագու-  
թիւնը»:

Արդ, եթէ ընկեր-ուսուցիչներուն երազը իրականացած ըլ-  
լար և արմատ բռնած՝ ատիկա վախճանը եղած պիտի ըլլար  
— բնական մահ կամ՝ աւելի՛ ճիշդը՝ անձնասպանութիւն —  
այն եղափոխութեան որ ներկայ հակիրճ ուսումնասիրութեան  
առարկան կը կազմէ: Ապերասան մանկավարժութիւնը, հակա-  
ռակ, երեւութապէս, աղուն ծանօթութեան վրայ հիմնուած  
ըլլալու յաւակնութեան, ժխտումն իսկ է նոր մանկավարժու-  
թեան (որ ուրիշ բան չէ բայց եթէ ներշնչում մը, ոգի մը),  
հետեւաբար նաեւ ժխտումը նոր դաստիարակութեան (այդ ոգիին  
իրականացումը), որուն յատկանիչը — ինչպէս տեղ մը կարգա-  
ցած ըլլալ կը կարծեմ — վերանորոգի՛լ է հանապազ, այսինքն  
եղափոխուիլ: Քարանալ որեւէ թէքնիքի մը ձեւին տակ կամ  
դրութեան վերածուիլ, կը կրկնեմ, ու բանա՛լ պիտի ըլլար  
ինքզինքը:

## ՅԱԻԵԼՈՒԱԾ

(ՆՈՐ ՄԵԹՈՏՆԵՐ ԵՒ ԴՐՈՒԹՅՆՆԵՐ)

Ա.

Տալլընի Դուրիւնը (Dalton Plan) իր անունը առած է  
Միացեալ Նահանգներու այն քաղաքէն ուր գործադրութեան  
դրուած է առաջին անգամ: Յղացում Օր. Փարքհըրստի:

Ըստ այս դրութեան կարգերը դասարան չունին (Ա. դասա-  
րան, Բ. կայլին), այլ ճիւղերը. թուաբանութեան դասարան,  
աշխարհագրութեան դասարան, լեզուի դասարան, կայլին:

Ուսմանց ծրագիրը մեր գիտցած սովորական ծրագիրն է

գործեալ, հասարակաց բոլոր աշակերտներուն և պարտադիր:  
Բայց իւրաքանչիւր ճիւղի ծրագիր չերտերու բաժնուած է,  
որոնք մէկ, երկու կամ աւելի շաբթուան աշխատութեան շաբ-  
քեր կը կազմեն:

Ամէն աշակերտ ատենին կ'ստանայ զանոնք և ուսուցիչ-  
ներուն հետ խորհրդակցութեամբ կ'որոշէ՝ ազա՛տօրէն՝ թէ այս  
կամ այն ճիւղէն ո՞րքան բան պիտի սորվի որոշեալ ժամանակի  
մը մէջ: Որքէ յետոյ՝ դասարանէ դասարան կ'այցելէ, առան-  
ձինն կամ իր մակարդակին վրայ դանուող ընկերներու հետ  
աշխատելու համար: Ծնորհիւ այս կարգադրութեան աշակերտ  
մը այսինչ ճիւղին Գ. կարգի, զոր օրինակ, ծրագիրը սորված  
ատեն, այնինչ ճիւղին Գ. կարգի ծրագիրը կը սորվի, ուրիշ  
ճիւղի մըն ալ Ե. կարգինը: Ուստի այն դասարանները որոնց  
ճիւղերուն մէջ ետ մնացած է՝ աւելի երկար ատեն կը մնայ քան  
յառաջացած ճիւղերուն դասարանները: Բնական է որ ժամա-  
նակի այս տարբերութիւնը երթալով նուազի և տղան բոլոր  
ճիւղերէն պահանջուած նուազագոյն ծանօթութիւնները ձեռք  
բերած ըլլայ տարւոյն վերջը:

Իւրաքանչիւր դասարանի մէջ համապատասխան ճիւղին  
վերաբերեալ անհրաժեշտ բաները կ'ուենեայ իր տրամադրու-  
թեան տակ. պատմութեան դասարանին մէջ՝ պատմութեան  
գիրքեր, պատկերներ, կայլին. աշխարհագրութեան դասարանին  
մէջ՝ աշխարհագրութեան գիրքեր, քարտէսներ, երկրագունտեր,  
վիճակագրութիւններ, կայլին. բնական գիտութեանց դասա-  
րանին մէջ՝ մարդակազմութեան, կենդանաբանական, բուսա-  
բանական, երկրաբանական պատկերներ, հաւաքածոներ, բնա-  
գիտական գործիքներ. լեզուի դասարանին մէջ՝ կարեւոր հեղի-  
նակներու երկեր, բառարաններ, քերականութիւններ:

Դասադրքէ ուսուցանելու դրութիւնը ջնջուած է: Թէեւ  
զանազան դասադրքեր կը գտնուին մատենագրարաններուն մէջ  
բայց ի հարկին անոնց ալ գիծելու համար միայն: Իւրաքան-  
չիւր դասարանի մէջ կը գտնուի նաև համապատասխան ճիւղին  
ուսուցիչը, միշտ պատրաստ օգնելու երբ տղան դժուարութեան  
մը հանդիպի, բայց ա՛յնքան միայն որքան անհրաժեշտ է:  
Ուսուցիչ չէ՛ սովորական իմաստով, այլ աշխատութեանց առաջ-  
նորդ: Աշխատութիւնները կը սրբազրէ, թելագրութիւններ  
կ'ընէ, ըստ պարագայի՝ աշակերտ մը կը քաջալերէ կամ կ'ար-

գիւն որ միակողմանի կերպով յառաջանայ:

Այսպէս ուսողւցումը իւրաքանչիւր աշակերտի կարողութեան կը պատշաճի, իւրաքանչիւր աշակերտ իր կարողութեան համաձայն արագութեամբ կը յառաջգիւնէ: Միւս կողմէ՝ սղան կրնայ խնայած ժամանակը յատկացնել:

ա. Անձնական հետաքրքրութիւնները գոհացնելու և մասնաւոր ընդունակութիւնները դարգացնելու — երաժշտութիւն, նկարչութիւն, ձեռնական դանագան աշխատանքներ, հաւաքածոներու կազմութիւն, ուսումնասիրութիւններ, եայլն:

Այս գրութիւնը արդիւնաւոր կերպով կը կիրարկուի անկլօսաքոսն երկիրներու մէջ:

Ուիննէթֆայի (Winnetka) Դուքիոն Ը.— Այս ալ Միացեալ Նահանգներու մէկ քաղաքին անունովը կոչուած է և սաւրածուած այդ երկրին մէջ: Յղացողը՝ Ուոչպըրն: Երազիրը դարձեալ նախօրօք պատրաստուած՝ սակայն զգալապէս տարբեր է սովորաբար գործադրուած ծրագրերէն: Իւրաքանչիւր տարիքի յարմար և անհրաժեշտ դասուած ծանօթութիւններ միայն կը պարունակէ, որոնք ընտրուած են մանրակրկիտ դիտողութեանց և վիճակագրութեանց միջոցաւ: Անժխտելի իրողութիւն մըն է արդարեւ թէ սովորական դպրոցներու ծրագրերը չեն մարտիր, սղոց մտային մակարդակէն միշտ մէկ-երկու տարի վեր ըլլալով:

Այդ ծրագրին ալ ճիւղերը չերտերու բաժնուած են, բայց աւելի փոքր և ըստ այնմ հարցարաններ պատրաստուած: Ամէն աշակերտ ինքնիրեն կ'աշխատի և կը փորձէ հարցումներուն պատասխանել: Շնորհիւ պատասխաններու տետրակի մը կրնայ, առանց ուսուցչին պէտք ունենալու, անձամբ և անմիջապէս հաստատել թէ յաջողած է կամ ո՛չ: Տղագրուած այդ տետրակներն են — հարցումներու և պատասխաններու — իր դասադրերը: Երբ չերտի մը բոլոր հարցումներուն պատասխանել յաջողի յաջորդին կ'անցնի, հետեւաբար և ազատօրէն կը յառաջգիւնէ առաւելագոյն արդիւնքը ձեռք բերելով: Հարկադրուած չ'ըլլար իրմէ գանդաղներուն սպասելու — ինչ որ ժամանակի ահագին կորուստի և թուլացումի պատճառ կըլլայ —, կամ հեռասպառ վազելու իրմէ արագ յառաջացողներուն ետեւէն — ինչ որ յուսալքութեան պատճառ կ'ըլլայ խիստ յաճախ:

Այս գրութեան ալ շնորհիւ աշակերտ մը կրնայ, օրինակի

համար, թուաբանութեան այսինչ կարգին ծրագիրը գործադրել, աշխարհագրութեան այսինչ կարգինը, մայրենի լեզուի ալ՝ ուրիշ կարգի մը: Երբ ճիւղի մը մէջ երկու տարի յառաջացած ըլլայ, կը լքէ զայն առժամաբար, տկա՛ր ճիւղերը զօրացնելու համար:

Այս նուազագոյն ծրագիրը ժամանակ կը ձգէ տղուն՝ մէկ կողմէ հաւաքական գործունէութեանց մասնակցելու (երգչախումբ, վիճարանական հաւաքոյթ, պտոյտ, մրցում, խաղ, եւ այլն), միւս կողմէ իր մասնաւոր ճաշակներուն գոհացում տալու:

Ի պրոցական օրուան մը տիպար ծրագիրը ընդհանրապէս երեք ժամ անհատական աշխատանք կը նախատեսէ, երկու ժամ ալ հաւաքական գործունէութիւն:

Քննութիւնները կը կատարուին մասնաւոր հարցարաններու վրայէ, ուսուցչին կողմէ ընտրութեամբ:

Ըլլա՛յ Տալլընի գրութիւնը, ըլլա՛յ այս՝ Ուիննէթֆայի գրութիւնը միջին ճամբայ մը կը կազմեն աւանդական դպրոցին և գործօն դպրոցին միջեւ:

Մոնրէստոնի Մեքոսը այս խումբին, այսինքն մասնակի կերպով անհատականացած ուսուցման մեթոտներու խումբին մէջ կը դասուի անո՛ր համար որ՝ թէեւ տղուն — մանուկի՛ն՝ պէտք էինք ըսել, տրուած ըլլալով որ Մոնթէսսօրիեան դպրոցները (casa dei bambini՝ մանուկներու տուն) նախադպրոցական տարիքի տղոց համար են —, թէեւ մանուկին՝ ուրեմն՝ ազատութեան և գործունէութեան բնական պահանջքին վրայ կ'ուղէ յենուլ (սովորական ձեւով դասարանը ջնջուած է, գրասեղաններուն տեղ գրուած են շարժական պղտիկ ամբոսներ և սեղաններ, սղաքը ազատութիւն ունին խօսելու և շարժելու). բայց տիկին Մոնթէսսօրիի յղացած հրահանգներու շարքը խիստ սիսթէմաթիք է, այլ մասնաւանդ այդ հրահանգներուն ծառայող պիտոյքը կանխա՛ւ որոշուած և անփոփոխելի: Ջանացած է, անտարակոյս, որ հրահանգները սղոց բնական պահանջքներուն համապատասխան ըլլան կարելի եղածին չափ, և ե՛ն մեծաւ մասամբ, այդուհանդերձ չեն դադրիր չափահասի՛ մը կողմէ, չափահասի մտայնութեամբ կանխօրօք պատրաստուած և պարտադրուած ըլլալէ. ինչ որ տղուն ազատութիւնը յարգել չէ, ազատութիւն՝ ընթացիկ կեանքէն ծնած իր չահագրգռութիւնները, ներկայի իրական պահանջքները գոհացնելու:



Շահագրգռութեան կեդրոններու մեքոսք (Centres d'intérêt) Պեւզիքացի հոգեբան մանկավարժ Տըքրուլիի կը պարտինք գլխաւորաբար: Այս մեթոտին ջատագովները կը հիմնուին այն իրողութեան վրայ թէ գարեբէ ի վեր գործադրուած ծրագիրը, ճիւղերու բաժանումներով, ստորաբաժանումներով, որոնք կանխաւ որոշուած պահերու կ'աւանդուին իրարմէ անկախաբար, ո՛րեւէ կերպով չեն համապատասխաներ ազոց ներկայ պահանջներուն, որովհետեւ ազան չըջատիւրու միջավայրին անմիջական, թանձրացեալ, բարդ, ամբողջական երեւոյթներովը և իրողութիւններովը կը հետաքրքրուի: Անհրաժեշտ կը դատեն հետեւաբար որ ա՛յդ իրողութիւններէն, շահագրգռութեան արգիւնք եղող արարքներէ մեկնի ուսուցումը. ուրիշ խօսքով՝ կեանքէն, աղուն ներկայ կեանքէն: «Դաստիարակութիւնը կեանք մըն է, կ'ըսեն, ո՛չ թէ անջատ ծանօթութեանց ամբարում առ ի նախատեսութիւն ապագայ կեանքի, ո՛չ թէ սպրիլ սորվեցնելու մտահոգութեամբ՝ աղան զրկել իր աղու կեանքէն: Դաստիարակութեան անմիջական նպատակը, կը սինգեն, ապագայ կեանքի պատրաստել չէ աղան՝ ձիչդ հակառակը, իր ներկայ կեանքը փթթեցնել է, աւելի՛ ընցուն, աւելի՛ ներզօր, աւելի՛ ճոխ, աւելի՛ բեղուն դարձնել է զայն»:

Ատիկա կը հարկադրէ մեզ «աղուն զարգացման օրէնքներուն պատշաճեցնել մանկավարժական թէքնիքները, և յարգել իր ազատութիւնը, որպէս զի կարենա՛յ բնականօրէն զարգանալ»:

Շահագրգռութեան կեդրոններու մեթոտը կը ջանայ, հետեւաբար, ծրագրին տարրերը կեդրոնական գաղափարներու շուրջ խմբել, մեկնելով, ինչպէս ըսինք, իրողութիւններէ, արարքներէ, և անոնցմէ իւրաքանչիւրը մէկ-երկու կամ աւելի շարժումն դասերու հիմը ընել: Օրինակի համար՝ ամբան եղանակի երկրագործական աշխատանքները, աղաքը պոսյալի մը ընթացքին ականատես՞ս եղած են անոնց, հետաքրքրուած և դիտա՞ծ: Ուսուցիչը կը փութայ այդ պատահութեանէն օգտուել, վերադարձին ուսումնասիրութեան նիւթ կը կազմեն ազարակը, հունձքը, մարգագետինը, հաւրակը, ևայլն: Լնթեցանութեան դասին ատո՞նց վերաբերեալ կոտորներ կը կարգան, որուն կապ-

ւած կ'ըլլան՝ բնականօրէն՝ բառագիրու թիւն, քերականութիւն, ուղղագրութիւն, գիր. նիւթին հետ կապ ունեցող քերթուած մը գոց կ'ընեն, երգ մը կը սորվին: Թուարանութեան և երկրաչափութեան խնդիրները նոյն միջավայրէն կ'առնուին: Երկրագործական արտադրութիւնները, գործիքները, մեքենաները բնական գիրութեանց դասերու նիւթ կը կազմեն: Միւս բոլոր ճիւղերուն ալ ուսուցումը, նոյնիսկ աշխարհագրութեան և պատմութեան, աչգոյէս կը կապուի ընտրուած կեդրոնական գաղափարին:

Տղաքը ուրեմն, առանց քերականութեան, պատմութեան, թուարանութեան, ձեռական աշխատութեան, բնական գիրութեանց, ևայլն, ևայլն, զատ զատ դասեր առնելու (որոնք, կրկնենք, իրարու հետ որեւէ կապ չեն ունենար) քերականական, պատմական, թուարանական և այլ ծանօթութիւններ կ'ստանան թանձրացեալ, իրական երեւոյթներ, կեանքի չերտեր ուսումնասիրելով և իրենց շահագրգռութեան, ներկայ մէկ պահանջքին գոհացում տալով:

Ինչպէս ամէն մեթոտ կամ դրութիւն, այս մեթոտն ալ առաւել կամ նուազ քննադատողներ կան: Այդուհանդերձ կառավարական ամովերջի քննութեանց արդիւնքները կը հաստատեն անոր անժխտելի գերիվերութիւնը աւանդական մեթոտէն, պայմանաւ որ հասկացողութեամբ և ձեռնհասօրէն կիրարկուի:

Մրազիրներու Մեքոսքը (Project method) նախորդին — շահագրգռութեան կեդրոններու մեթոտին — աւելի՛ յառաջացած, աւելի՛ կատարեալ մէկ ձեւն է, ներչնչուած Տիւրիքագաղափարներէն: Տիւրիքէն զատ ուրիշ բազմաթիւ մանկավարժներու կողմէ ալ կիրարկուած է, ի մասնաւորի Միացեալ Նահանգներուն մէջ:

Տղաքը՝ խոմբերու բաժնուած՝ հաւաքակա՛ն աշխատանքներ կը կատարեն: Աշխատանքներ՝ իրենց ներկայ մէկ շահագրգռութեան գոհացում տալու, իրական նպատակ մը իրագործելու համար, որով՝ իրենք կ'որոշեն իրենց ծրագիրը ըստ պահանջքի. ատկէ ալ «ծրագիրներու մեթոտ» յորջորջումը:

Նպատակը, պահանջքը ծնունդ առնելէն վերջ կը փնտռեն, կը դանեն, կը սորվին զայն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր ծանօթութիւնները և միջոցները: Այսպէս ուսումը կը դադրի նպատակ մը ըլլալէ՝ ինչպէս է աւանդական դպրոց-

ներուն մէջ: Բոլորովին հակառակը՝ միջոց մը կ'ըլլայ, կրկնե՛նք, անմիջական նպատակի մը իրագործման: Օրինակի համար, տղաքը, պղտիկներու պարագային, քարեգնդակ խաղալու համար թուաբանութեան պէտք կ'ըզան, որովհետեւ հաշիւը խաղին մաս կը կազմէ. ուստի կը շահագրգռուին ու կը սորվին թուաբանական ա՛յն գործողութիւնները որոնք անմիջականօրէն անհրաժեշտ են: Նոյն բանը նաև իրենց տարիքին յարմար և պահանջած ուրիշ ամէն կարգի ծանօթութեանց համար:

Աւելի մեծերուն կողմէ նպատակի մը իրագործման հետեւեալ օրինակը աւելի՛ շահեկան և ա՛յլատէս բացատրիչ ըլլայ հաւանաբար:

Միտուրիի մէջ «ծրագիրներու մեթոտ»ը առ ի փորձ կիրարկող գիւղական դպրոցի մը Զ.11 տարեկան խումբ մը աշակերտներ և աշակերտուհիներ (տղաքը երեք խումբերու բաժնուած էին, ո՛չ կարգերու) անդրադառնալով որ իրենց մէկ ընկերը բացակայ է, կ'ուզեն պատճառը գիտնալ: Ժանտատենդով պահած էր: Եւ որովհետեւ այդ տղուն ընտանիքին մէջ առաջին անգամը էր որ ժանտատենդ կը պատահէր — մեռնող եղած էր նոյնիսկ — կը խորհին թէ՛ երեւոյթը յաճախաբէպ ըլլալով՝ տեւական պատճառ մը գոյութիւն ունենալու էր: Հետաքրքրուած և մտահոգ՝ կ'որոշեն այդ պատճառը կամ պատճառները փնտռել, գտնել: Այսպէս ծնունդ կ'առնէ նպատակ մը, ծրագիր մը, անմիջական, թանձրացեալ, ինքզինքը պարտադրող:

Անմիջապէս ժողով կը գումարեն. պէտք էր տեղեկանալ, ձեռնհաս անձերէ, թերթերէ, գիրքերէ, թէ ժանտատենդի պատճառ ի՞նչ բաներ կրնան ըլլալ (հորի ջուր, կաթի աման, աղբանոց, ճանձ): Յետոյ, իրենց ընկերով հօրմէն, ազարակատէր Պ. Սմիթէն ժամագրութիւն տանելով կ'երթան այցելելու հիւանդին և միեւնոյն ատեն քննելու թէ յիշեալ կարելի պատճառներէն ո՞րը գոյութիւն ունի տունին մէջ: Աղջիկներէն մէկը՝ ծաղկեփունջ մը տանիլ խելք կ'ընէ: Բայց չեն մոռնար նաև կանխազգուշութեանց մասին խորհելու՝ վարակու մէ խուսափելու համար:

Այցելութեան յաջորդող ժողովի մը մէջ, ամէն մարդ համաձայն կը գնուի որ Պ. Սմիթէնց պարագային հիւանդութեան պատճառը տունին շրջապատի աղբանոցները և ատոր

հետեւանք՝ ճանձերն էին:

Բայց, չի բաւեր պատճառը գտնել, պէտք է գարման խորհիլ, կանխազգուշական միջոցներ թելագրել Պ. Սմիթին, որ արդէն խնդրած է ասիկա իրենցմէ: Ուստի արդիական պայմաններով օժտուած բնակարան մը կ'այցելեն: Այսպէս, երբ տեղեկագրի մը նիւթերը պատրաստ կ'ըլլան, զայն խմբագրելու պաշտօն կը յանձնուի պղտիկ յանձնախումբի մը, վաւերացու մը ժողովին վերապահուելով:

Տեղեկագիրը երկու մասէ կը բաղկանար.

ա. Հիւանդութեան պատճառները Պ. Սմիթէնց բնակարանին մէջ:

բ. Ի՞նչպէս Պ. Սմիթ կրնայ պայքարիլ ճանձերուն դէմ:

Այս երկրորդ մասին մէջ ցոյց կը տրուի ճանձորս գործիքներ զետեղելու, կափարկելով աղբամաններ շինելու ձեւը (աղոց կողմէ շինուած ճանձորս գործիքի մը և աղբամանի մը օրինակները ընկերակցուելով տեղեկագրին) և կը հաղորդուին պատուհաններու անցուելիք ցանցաթելին գինը, վաճառողին հասցէն:

Ասիկա առիթ մը կ'ըլլայ նաև տղոց համար որ հետազօտութիւն մը կատարեն, համայնքին մէջ ամէնէն յաճախաբէպ հմուտութեանց մասին վիճակագրութիւն մը կազմեն և առհարիւր հաշուել սորվին:

Ի վերջոյ ծնողքները երեկոյթի մը կը հրաւիրեն, ձեռք բերուած արդիւնքը հաղորդելու համար անոնց հետեւեալ յայտագրով.

Չորեքշաբթի, իրիկուն, ժամը 7 ին,

3 Դեկտեմբեր 1918

Տեղեկագրովի ՄԻՐ ՀՍՄՍՅԵՔԻՆ ՄԷՋ ՊՍՏԱՀՈՂ

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՅ ՄԱՍԻՆ

1. Երգ (աշակերտութիւն և հանդիսականներ միասնաբար).
2. Համայնքին մէջ պատահած հիւանդութեանց վիճակագրական պատկերը (ծիուրը).
3. Ի՞նչ է հաւանական պատճառը համայնքին մէջ պատահած ժանտատենդի դէպքերուն (Թոմ).
4. Մեթոտներ որոնք կը գործածուին մեր համայնքին մէջ ճանձերուն դէմ (Օն)



5. Յանձնարարելի ճանճորս գործիքի մը գործածութեան բացատրութիւնը (Ալֆրէտ)։

6. Բանախօսութիւն, լուսարձակով. «Ինչպէս պայքարիլ ճանճերուն դէմ» (Ճորճ)։

7. Զովացուցիչներով պատուասիրութիւն։

Ուրախ պիտի ըլլանք եթէ մեր հաւաքոյթին ներկայ գտնուիք։

Ք. ԴՊՐՈՑԻ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Ընթերցողը կ'ուզէ գիտնալ, անտարակոյս, թէ ի՞նչ եղած է այս դպրոցին մէջ կատարուած չորս տարուան փորձին արդիւնքը։

ա. Այս դպրոցին աշակերտները նախակրթարանի ուսմանց ծրագրին բոլոր ճիւղերուն մէջ յաջողագոյն եղած են կառավարական քննութեանց՝ քան միւս (աւանդական) դպրոցներուն աշակերտները։

Բ. Եւ — ինչ որ շատ աւելի արժէքաւոր է — այսպիսի դպրոցի մը գոյութիւնը գիւղին մէջ բացայայտօրէն բարերար ազդեցութիւն ունեցած է ծնողաց վրայ՝ իմացական, բնկերային և տնտեսական տեսակէտէ։ Ուրիշ խօսքով՝ ծնողքներն ալ դաստիարակուած են իրենց զաւակներուն հետն ի վեր և չնորհիւ անոնց գործունէութեան։



2p

904

47. 995

Մանկավարժութեան ուսուցիչ

### Պոլսու Գեորգեանի Գործերը

1. De l'Efficacité de l'Exemple. Nécessité d'une Science des Parents. (Vrin, Paris).
2. Froebel devant la Pédagogie Scientifique. (Guébénian, Nicosie).
3. L'Emile de Rousseau et l'Emile des Ecoles Normales. Actualités Pédagogiques et Psychologiques. (Delachaux et Niestlé, Neuchâtel et Paris).
4. Le Pédantisme chez l'Adolescent. Extrait de la Revue Belge de Psychologie et de Pédagogie. (Bruxelles).
5. Հիւր ՊԱՐԴ Կեանքը և Մանկավարժ. Սկզբունքները (Հերմոն, Իսթանպուլ):
6. ԻՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ (Նարին, Իսթանպուլ)
7. Ecole Arménienne de Begnins et Genève. (But et Programme de l'Enseignement.) Genève.
8. ՀԱՅ ԳՊՐՈՅ, ՊԸՆԵՔՆ և ԺԸՆԷՎ. (Նպատակ և ուսմանց ծրագիր) Ժընէվ.
9. ԵՐԱԳԻՐ ՌԻՍՄԱՆՅ ԳՊՐՈՅԱՍԷՐ ՏՐԿԱՆՅ ՎԱՐՃԱՐԱՆԻ (Նախակրթարան, երկրորդական վարժարան, վարժուհիներ) Արդուսան, Իսթանպուլ.
10. ԾՆՈՂՔՆԵՐ ՈՒՆ. (Ընկերակցութեամբ Տօքթ. Վահէ Հինգլիանի) Նարին, Իսթանպուլ.
11. ՄԵՄԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐ (Պէյրուիթ).
12. Ի ՎԵՐՈՒՍՏ ԱԿԱՍՐԿ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՒ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԵՂԱՓՈՒՍՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ. (Ֆրանսերէն և Հայերէն յաւելուածով)

Թարգմանութիւններ

- |   |   |        |
|---|---|--------|
| <ol style="list-style-type: none"> <li>1. ՉԱՓՈՒ ՎՐԱՅ ԳՊՐՈՅ. Էա. Քրախառէտ</li> <li>2. ՄԱՆԿԱՎԱՐՃԸ ՁԻՍԻՐԵՐ ՏՂԱՔԸ. Ա. Ռօօրաա</li> <li>3. ԿՈՒՒԻ ԲՆԱԶԴԸ. Փիէն Պօլէ</li> <li>4. ՏՈՒՆ ԵՒ ԱՇԽԱՐՀ. Ռապիւարանաթ Թակօր</li> <li>5. ՍՏՈՐԱԿԱՅՈՒԹԵԱՆ ԶԳԱՅՈՒՄԸ ՏՂՈՅ ՄԷՁ.</li> </ol> | } | սպառած |
|---|---|--------|

Էա. Քրախառէտ (Նիկոսիա)

Հրատարակութիւններ և Տպագրութիւն Հայ Դպրոցի. (Պընէքն և Ժընէվ)